



«Նոր ժամանակի կրթություն»

34

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝

Բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր
հիմնախնդիր, կրթությունը և դաստիարակությունը դպրոցում

Առարկան՝ Տեխնոլոգիա

Հետազոտող ուսուցիչ՝ Մ. Հ. Գալստյան

Ուսումնական հաստատություն՝

Երևանի երաժշտական հ. 13 հատուկ դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն

Գլուխ 1. Ինչպես պահպանենք բնությունը և ապրենք նրա հետ ներդաշնակ

Գլուխ 2 Անտառի պահպանությունը որպես բնության պահպանության կարևոր մաս

Գլուխ 3 Հայաստանի բնությունը

3.1 Հայաստանի անտառները

3.2 Անտառային հինգ գոտիները

Եզրակացություն

Լրացուցիչ տեղեկություն՝ պայմանանշաններ

Ներածություն

Մարդկության առաքելությունն է մոլորակի բնական միջավայրի քայքայման կանխումը և այնպիսի ապագայի կառուցումը, որտեղ մարդիկ կապրեն բնության հետ ներդաշնակ՝ պահպանելով մոլորակի կենսաբազմազանությունը, ապահովելով վերականգնվող բնական պաշարների կայուն օգտագործումը, նվազեցնելով աղտոտումն ու բնական պաշարների անխնա սպառումը, լուծելով կլիմայի, պարենի և զարգացման հետ կապված հարցերը:

Բնության մեջ ամեն բան սերտորեն կապված են միմյանց: Մարդկությունը չպետք է վնասի բնությանը, այլ ընդհակառակը ամեն ինչ պետք է անի, որպեսզի բնության բնականոն ընթացքը չխաթարվի:

Մարդը լինելով բնության մի մասնիկը, նույնպես կապված է շրջակա միջավայրի՝ հողի, գետերի, օդի և շրջապատում ապրող մյուս բոլոր օրգանիզմների հետ: Գիտությունն օգնում է մեզ քննելու և բացատրելու այդ նրբին փոխադարձ կապերը, որպեսզի նախ և առաջ մենք ինքներս մեզ չվնասենք:

Մարդու ու բնության մեջ հազարամյակների ընթացքում մշակվել է բնական հավասարակշռություն: Բնության այդ հավասարակշռության մասին է ահա, որ մարդը չպետք է մոռանա: Եվ ահա թե ինչու այն, ինչ մենք անվանում ենք բնության պահպանություն կամ, ավելի ճիշտ, բնական միջավայրի պահպանություն, վերջին հաշվով հենց մարդու պահապանումն է:

§1 Ինչպե՞ս պահպանենք բնությունը և ապրենք նրա հետ ներդաշնակ

Բնապահպանությունը երկիր մոլորակի ողջ մարդկության գլխավոր հիմնախնդիրն է, իսկ «Մարդկության ինքնառնչազանցման վտանգ» հասկացությունը դարձել է համայն մարդկությանը հուզող հարցը:

Մարդն իր գործունեությամբ ակտիվորեն ազդում է շրջապատող բնական միջավայրի վրա, և այդ ազդեցությունը կարող է ունենալ թե՛ դրական, թե՛ բացասական հետևանքներ: Չորացվել և օգտագործվել են միլիոնավոր հեկտար ճահիճներ ու գերխոնավ հողատարածություններ, որի շնորհիվ խիստ կրճատվել են հիվանդությունները, ոռոգվել են անապատային հողերը, կանաչապատվել ու ստեղծվել են անտառագոտիներ:

Մի ժամանակ մարդը, լավ չիմանալով բնության օրենքները, անխնա ոչնչացնում էր բոլոր գիշատիչ կենդանիներին՝ գայլերին, աղվեսներին, ուրուրներին... Իսկ հետո պարզվեց, որ այնտեղ, ուր ոչնչացրել էին գայլերին, սկսել են հիվանդանալ եղջերուները: Աղվեսների և գիշատիչ թռչունների բացակայությամբ կրծողներն այնքան էին բազմացել, որ մեծ վնաս էին հասցնում գյուղատնտեսությանը: Օգուտի փոխարեն վնաս էր ստացվում: Գիշատիչներն ու նրանց կերակուրը դարձող մյուս կենդանիները կողք կողքի գոյություն ունեն արդեն շատ հազարամյակներ, և այդ ընթացքում մշակվել է մի այնպիսի բնական հավասարակշռություն, որն օգնում է գոյատևելու թե՛ առաջիններին և թե՛ երկրորդներին:

Բնության այդ հավասարակշռության մասին է ահա, որ մարդը չպետք է մոռանա:

Վերցնենք այսպիսի մի օրինակ. թունաքիմիկատները ոչնչացնում են վնասատու միջատներին: Եթե դրանցով սրսկենք դաշտերն ու անտառները, ապա բոլոր վնասատու միջատները կոչնչանան: Բայց դրանց հետ միասին կարող են ոչնչանալ նաև օգտակար կենդանիները, որովհետև տասնյակ հազարավոր թռչուններ, հարյուրավոր որմզդեղններ ու նապաստակներ սննդի հետ թույն էլ կստանան:

Ծխի քուլաներով կեղտոտված օդից, կեղտաջրերով աղտոտված գետերից վնասվում է ոչ միայն բնությունը, այլև հիվանդանում ու տառապում է նաև մարդը: Ահա թե ինչու այն, ինչ մենք անվանում ենք բնության պահպանություն կամ, ավելի

Ճիշտ, բնական միջավայրի պահպանություն, վերջին հաշվով հենց մարդու պահպանումն է: Դա մեր ապագայի պահպանումն է, այն կյանքի, որ երկրագնդի վրա կշարունակվի մեզանից հետո կամ էլ կդադարի մեր մեղքով:

Ողջ աշխարհի գիտնականները վաղուց են տազնապում: Նրանք ապացուցել են, որ հարկավոր է մանրագնին կշռադատել մարդու կողմից բնության ամեն մի միջամտություն:

Մարդը երկրագնդի վրա արդեն ոչնչացրել է ավելի քան 270 տեսակի վայրի կենդանիներ: Այն կենդանիները, որոնց ևս սպառնում է անհետացումը, ընդգրկված են Բնության պահպանության միջազգային միության «Հազվագյուտ և անհետացող կենդանիների կարմիր գրքում»: Դրանք խնամքով պահպանվում են: Այդ ցուցակի մեջ են մտել ոչ միայն անվնաս ու անօգնական կենդանիները, այլև որոշ տեսակի վայրի զազաններ: Եվ ոչ թե սոսկ այն պատճառով, որ նրանց մորթին թանկ է գնահատվում, այլև որովհետև մարդը նոր հողեր յուրացնելով, կրճատում է վայրի կենդանիների բնակության վայրերը: Օրինակ, այնտեղ, ուր գարնանը անտառ են հատում, այլևս բնակություն չեն հաստատում զգուշավոր թռչունների որոշ տեսակներ: Դրա համար էլ բոլոր երկրներում կան արգելանոցներ՝ վայրեր, ուր պահպանվում է կենդանիների և բույսերի կուսական աշխարհը: Այդ արգելանոցներում գիտնականներն ուսումնասիրում են բնության օրենքները:

Բայց արգելանոցից դուրս էլ մարդը պետք է խելացի օգտագործի բնության հարստությունները՝ հողը, անտառը, ձկան, թռչունների ու զազանների պաշարները, որոնք անհրաժեշտ են իր սննդի և արդյունաբերության համար:

§2 Անտառի պահպանությունը որպես բնության պահպանության կարևոր մաս

Բուսական աշխարհը գտնվում է վտանգի տակ ամբողջ մոլորակի վրա: Անտառը, որպես բուսական համակեցությունների մեջ առավել արդյունավետներից, և հետևաբար, առավել արժեքավորներից մեկը, որն էլ կատարում է նաև ջրապաշտպան գործառույթ, պահպանման կարիք ունի:

Անտառը բոլորի բարեկամն է:

Գազանների ու թռչունների համար նա հարազատ տուն է:

Ղաշտերի համար պահապան է քանուց, այլապես քամին ղաշտերից կքշեր կտաներ հողի ողջ բերրի շերտը և կչորացներ այն:

Անտառը բարեկամն է գետի և նրա բնակիչների: Երբ մեռնում է անտառը, շատ չանցած ժանձաղում և ցամաքում է գետը: Գարնանը ձնհալի ջուրը 1 շաբաթում հոսում հեռանում է ղաշտերից: Իսկ անտառի թավուտում, ծառերի ճյուղերի տակ, ձյունը դեռ մնում է մի ամբողջ ամիս, հալվելով աստիճանաբար և անտառային առվակներով մշտապես ջուր է մատակարարում գետերին:

Անտառը բարեկամ է նաև օդի: Անտառի բույսերը օդը մաքրում են փոշուց ու մրից, հագեցնում թթվածնով:

Մարդու համար անտառն ամենաշռայլ բարեկամն է:

Ամփոփելով կարող ենք ասել, որ անտառները`

1. Ապահովում են կենսաբազմազանությունը

Նրանք պարզապես ծառեր չեն, այլ էկոհամակարգ` հանդիսանալով միլիոնավոր բույսերի և կենդանիների բնակատեղի:

2. Մաքրում են օդը և տալիս թթվածին:

Պատահական չէ, որ անտառները համարվում են մեր մոլորակի թոքերը, քանի որ կանաչ բույսերը կլանում են ածխաթթու գազը և արտազատում թթվածին: Հաշվարկված է, որ անտառներն ապահովում են թթվածնի շրջապտույտի շուրջ 28%-ը: Մեկ ժամում մեկ հա անտառը արտադրում է 200 մարդու համար անհրաժեշտ թթվածին:

3. Կառավարում են ջրային հոսքերը

Դանդաղեցնելով ձյան հալոցքը՝ թուլացնում են գետերի վարարումը, օգնում ջրի քանակության հավասարակշռության պահպանմանը: Տարբեր հաշվարկներով անտառներն ապահովում են բնության մեջ ջրի շրջապտույտի մոտ 50%-ը:

4. Սնուցում են հողը

Անտառները պաշտպանում են հողերի արգավանդ շերտերը հողմահարումից, ինչպես նաև ամրացնում են սորուն ավազները:

5. Դեղամիջոցի հումք են

Ջարգացող երկրների բնակչության ավելի քան 70%-ն օգտվում է ավանդական դեղամիջոցներից, որոնցից կեսից ավելին ստացվում են անտառային բույսերից: Բուլորիս հայտնի ասպիրինի ստացման համար օգտագործվում են ուռենու ծառից արտազատված նյութեր, իսկ քաղցկեղի դեմ դեղորայքի շուրջ 70%-ի համար՝ արևադարձային անտառների բույսեր:

6. Ապրուստի և եկամտի աղբյուր են

Մոտավորապես 1.6 մլրդ մարդ աշխարհում օգտագործում են անտառը որպես ապրուստի և եկամուտ հայթահայթելու աղբյուր՝ ստանալով փայտ և շինարարական նյութեր, հավաքելով մրգեր, ընկուզեղեն, սունկ, մեղր, դեղաբյուսեր, արածեցնելով անասուններին և որսալով վայրի կենդանիներ: Փայտային վառելիքն աշխարհում ապահովում է վերականգնվող էներգիայի 40%-ը:

7. Կառավարում են գլոբալ տաքացումը

Անտառները կլանում են մթնոլորտի ածխաթթու գազը, որն էլ այժմ կլիմայի փոփոխության գլխավոր պատճառներից է:

Երկրի մթնոլորտում կա մոտ 800 գիգատոննա ածխածին: Անտառներում կուտակվում է 550 գիգատոննա ածխածին: Եթե այսքան ածխածինը ներթափանցի մթնոլորտ, ապա կտրուկ կբարձրանա ջերմոցային էֆեկտն ու կշարունակվի գլոբալ տաքացումը: Ապացուցված է, որ ջերմոցային գազերի տարեկան գլոբալ արտանետումներում անտառահատումների պատճառով դեպի մթնոլորտ արտանետումների ավելցուկը կազմում է շուրջ 20%:

Հարուստ ու գեղեցիկ է անտառը: Դրա համար ամեն մի ծառ, թուփ ու խոտ պետք է պահպանել, և հատկապես պետք է պահպանել կրակից:

§3 Հայաստանի բնությունը

3.1 Հայաստանի անտառները

Հայաստանի պես փոքր երկրի համար բնապահպանությունը առավել կարևոր է:

Ժամանակակից Հայաստանը փոքր երկիր է, գտնվում է Կովկասյան պարանոցի հարավում՝ Սև և Կասպից ծովերի միջև: Այն զբաղեցնում է մոտ 29.743 կմ² տարածք՝ Հայկական բարձրավանդակի հյուսիս-արևելյան հատվածում, ամբողջությամբ լեռնային երկիր է: Հայկական բարձրավանդակը բարձր է հարևան Փոքրասիական և Իրանական բարձրավանդակներից միջինը 500-800 մ, լեռնային կղզի է:

Հայաստանի բուսական աշխարհը շատ բազմազան է: Անտառը նրա կենսոլորտային ամենանշանակալից բաղադրիչն է: Հայաստանի ֆլորան կազմում է 3600 տեսակ:

Բնության պահպանությանը առանձնապես մեծ նշանակություն է տրվում մեր երկրում: Հայաստանում գոյություն ունեն բնության պահպանության մասին հատուկ օրենքներ, և ամեն մարդ պարտավոր է հետևել դրանց: Չէ՞ որ մեր սերունդներին էլ են անհրաժեշտ լինելու կանաչապատ տարածությունները, մաքուր ջուրը, թռչունների դայլայլը՝ բնության ողջ գեղեցկությունը:

Անտառի և բույսերի բազմազանությունը պաշտպանվում է մի շարք միջազգային կոնվենցիաների միջոցով, որոնք հաստատվել են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից: Դրանք են՝ «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիան, «Լանդշաֆտի Եվրոպական կոնվենցիան», «Ռչնչացման վտանգի տակ գտնվող ֆաունայի և ֆլորայի վայրի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիան, «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին կոնվենցիան»: Նաև գործում է ազգային օրենսդրությունը, ներառյալ՝ «Բուսական աշխարհի մասին ՀՀ օրենքը», «ՀՀ անտառային օրենսգիրք», «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենք», «Հայաստանի Կարմիր գիրք: Բույսեր»: 452 վտանգված անոթավոր բույսերից 166-ը (37%) պահպանվում են հատուկ պահպանվող տարածքներում: Մի շարք այլ օրենքներում կան դրույթներ, որոնք կապված են բնության օբյեկտների պահպանման միջոցառումների հետ: Սակայն նույնիսկ բավական զարգացած օրենսդրական դաշտը ոչ միշտ է ապահովում երկրի բուսական աշխարհի պահպանությունը:

Անկախության առաջին տարիներին, երբ երկիրը, զրկված լինելով սեփական էներգիայի աղբյուրներից, գտնվում էր շրջափակման մեջ, անտառահատումները նշանակալից էին: Այսօր այդ գործընթացը ավելի կարգավորելի է, բայց անտառահատումներից առաջացած վնասը դեռ չի կարելի համարել հաղթահարված: Վաճառքի համար բնակչության կողմից դեղատու և գեղազարդ բույսերի հավաքը տարերային բնույթ է կրում և դեռ գտնված չեն մեխանիզմներ այդ երևույթի կանոնակարգման համար:

3.2. Հայաստանի անտառային 5 գոտիները


Անտառ հասկացությունը գիտական տեսանկյունից միանշանակ չէ: Ըստ պաշտոնական տվյալների, անտառները Հայաստանում զբաղեցնում են տարածքի 11-12%-ը, չնայած երկրաբանական անցյալում Հայաստանի անտառածածկույթը առավել լայնածավալ էր:

Հայաստանի անտառային գոտին բաժանվում է հինգ գոտիների՝


1. Հայաստանի փակ (սաղարթախիտ) անտառներ



2. Հայաստանի բաց անտառներ (նոսրանտառներ)




3. Հայաստանի մերձափանյա անտառներ



4. Հայաստանի արիդային մացառուտներ



5. Հայաստանի մերձալպյան գոտի



Հայաստանի փակ (սաղարթախիտ) անտառները գտնվում են երկրի հյուսիս-արևելքում և հարավ արևելքում: Դրանք կարելի է համեմատել երկու կղզիների հետ, որոնք գտնվում են լայնածավալ անտառազուրկ կամ նոսրանտառային տարածքներում: Անտառային զանգվածների միջև տեղանքը զբաղված է նաև թփուտապատ լանջերով, տափաստանային բուսականությամբ, լեռնային քսերոֆիտների բուսական համակեցություններով: Գետերի երկայնքով աճում են հունամերձ անտառները:

Բուսական խմբավորումների նմանատիպ խայտաբղետությունը լեռնային երկրի պայմաններում մայրցամաքային կլիմայի հետևանք է, ինչպես նաև մարդկային տնտեսական գործունեության արդյունք:

Հնագույն ժամանակներից մարդիկ բնակվել են այս տարածքում: Հնէաբանական գտածոները ժամանակագրվում են մ.թ.ա. 8-5 հազարամյակներով: Հայկական լեռների ստորոտներից մինչև գագաթները կարելի է գտնել դեռ անհիշելի ժամանակներից մարդու առկայության հետքեր:

Անտառի պահպանությունը մեր երկրում բնության պահպանության համար տարվող մեծ աշխատանքի կարևոր մասն է:

Հայաստանում կա երկու անտառային արգելանոցներ՝ «Խոսրովի անտառ» և «Շիկահող» և անտառի հետ կապված չորս Ազգային պարկ՝ «Դիլիջան», «Սևան», «Արևիկ» և «Արփի լիճ»:

Հայաստանի հատուկ հպարտությունն է արևելյան սոսու պուրակը: Ղա հրաշալի անտառ է, որը նեղ շերտով ձգվում է է Ծավ գետի երկայնքով Հայաստանի հարավում՝ Սյունիքի մարզում: Հսկայական հաստաբուն սոսիները փակում են երկինքը: Ղա անմոռանալի տեսարան է: Սոսիներին ուղեկցում են սովորական ընկուզենին և Հայաստանի համար հազվագյուտ լիան՝ հունական շրջահյուսը: Այս պուրակի ենթաստառում առաջանում են խիտ թփուտներ, հազվագյուտ, անհետացող տեսակ՝ հսկայական չափերի (մինչև 2.5 մ բարձրության) հասնող պտերը:

Այսպիսով կարող ենք փաստել, որ չնայած բուսական աշխարհի պահպանության հացերում առկա թերություններին, Հայաստանի ֆլորան շարունակում է ուրախացնել նրանց, ովքեր առնչվում են նրա գեղեցկությանը անտառներում, մարգագետիններում, կիսաանապատներում և երկրի այլ բուսական համակեցություններում իսկ բուսաբանները գրեթե ամեն տարի նոր տեսականներ են նկարագրում:

Եզրակացություն

Ասել, որ բնության պահպանության համար կոնկրետ քայլեր չեն արվում ճիշտ չի լինի: Պարզապես դրանք բավարար չեն: Սերը բնության հանդեպ պետք է սերմանենք մարդկանց մեջ վաղ տարիքից: Դրա մասին պետք է շատ խոսենք դպրոցահասակ երեխաների հետ: Օրինակ՝ «Տեխնոլոգիա» առարկայից 5, 6 և 7-րդ դասարաններում աշակերտները սովորում են փայտամշակում, կարդում են բնափայտի հրաշալի հատկությունների մասին (փայտանյութը հեշտ է մշակվում, լինելով թեթև ունի մեծ ամրություն, լավ է սոսնձվում, լավ է գեղերեսվում, աչքի է ընկնում ցածր ջերմահաղորդականությամբ և այլն), բայց դասագրքում մեկ տողով անգամ աշակերտներին չի ասվում, որ պետք է խնայողաբար օգտագործել փայտանյութը, որ պետք է պաշտպանել անտառը ապօրինի հատումներից և առավել ևս հրդեհներից: Մինչդեռ կարելի էր տեղեկացնել աշակերտներին, որ 1 ծառը կարելի է հատել հինգ րոպեում, մինչդեռ այն վերականգնելու համար կպահանջվեն տարիներ:

Անտառների դեգրադացման գլխավոր պատճառներից մեկն էլ հրդեհներն են:

Կարծում են հրդեհների պատճառը բնակչության բավարար չափով իրազեկված չլինելն է: Օրինակ՝ հրդեհներ հաճախ առաջանում են, երբ մարդիկ բույսերի մնացորդները այրում են և չեն հետևում մինչև կրակը մարի:

Բնակչությանը իրազեկելու լավագույն միջոցը կարծում են ճանապարհներին, հանգստյան վայրերում, անտառներում և անտառամերձ տարածքներում ցուցանակներ տեղադրելն է, որոնց վրա գրված կլինեն օրինակ՝

«Անտառը քո բարեկամն է»,

«Անտառը օդը հագեցնում է թթվածնով»,

«Անտառները ապահովում են ջրի շրջապտույտը»,

«Անտառները կառավարում են գլոբալ տաքացումը»,

«Պահպանենք անտառները հրդեհներից»,

«Ասենք ոչ ապօրինի ծառահատումներին» և այլն:

սկսալիսով մենք իրազեկված և զգոն կպահենք բնակչությանը:

ԱՊՐԵՆՔ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՆԵՐԴԱՇՆԱԿ:

ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ ICONS



Մեղրատու է
Honey-bearing



Օգտագործվում է որպես վառելափայտ
Firewood



Կիրառվում է կանաչապատման մեջ
Used in landscaping



Օգտագործվում է բժշկության մեջ
Used in medicine



Գրանցված է Հայաստանի Կարմիր Գրքում
Threatened - Registered in the Red Book of Armenia



Գեղազարդ է
Ornamental



Ուտելի բույս է
Edible plant



Կիրառվում է ներկեր պատրաստելիս
Used in dye preparation



Թանկարժեք բնափայտ
Precious wood



Թունավոր է
Poisonous

Օգտագործված գրականության ցանկ

1. Ինչ է, ով է
2. Կանաչ Հայաստան (Երևան 2016)